

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների 2022թ. տարեկան արդյունքների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումների և վերլուծության, կազմակերպությունների գործունեության արդյունավետության որոշման և գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքների գնահատման վերաբերյալ

ՄԱՍ- 1

50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական դիտարկումների (մոնիտորինգ), կազմակերպությունների գործունեության արդյունավետության որոշման վերաբերյալ

ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1262-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածով՝ «Պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու, դրանց գործունեությունը վերլուծելու և արդյունքներն ամփոփելու» կարգի համաձայն պետական գույքի կառավարման կոմիտեն 2022թ. տարեկան տվյալների հիման վրա մոնիտորինգ է իրականացրել ՀՀ կառավարության, ՀՀ նախարարությունների, դրանց ենթակա մարմինների, ՀՀ մարզպետարանների, ՀՀ հանրային հեռարձակողի խորհուրդի ենթակայության և Երևանի քաղաքապետարանի կառավարմանը հանձնված մոնիտորինգի ենթակա 146 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններից (այսուհետ՝ Կազմակերպություն) 139 Կազմակերպությունների համար **(աղյուսակ 1.)**:

Վերլուծություն չի իրականացվել 7 Կազմակերպությունների համար: Վերլուծություն չիրականացման պատճառները և Կազմակերպությունների անվանումները ներկայացված են համապատասխան կառավարման մարմնի ընկերությունների վերլուծության հատվածում:

(աղյուսակ 1.)

Կազմակերպությունների թիվն ըստ պետական կառավարման լիազորված մարմինների


h/h	Անվանումը	Մոնիտորինգի ենթակա Կազմակերպությունների թիվը	Տեղեկատվու թյուն ներկայացրա ծ Կազմակերպ ությունների թիվը
ՀՀ Նախարարություններ, ՀՀ կառավարությանը և ՀՀ նախարարություններին ենթակա մարմիններ			
1	ՀՀ Առողջապահության նախարարություն	13	12
2	ՀՀ Արդարադատության նախարարություն	1	1
3	ՀՀ Վարչապետի աշխատակազմ	3	1
4	ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն	1	1
5	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	12	12
6	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	7	7
7	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	4	4
8	ՀՀ Պաշտպանության նախարարություն	2	2
9	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	10	9
10	Քաղաքաշինության կոմիտե	2	2
11	ՀՀ հանրային հեռարձակողի խորհուրդ	3	3
12	Քաղաքացիական ավիացիայի կոմիտե	3	3
13	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	11	9
14	ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե	6	6
ՀՀ մարզպետարաններ			
15	Արմավիրի մարզպետարան	4	4
16	Արագածոտնի մարզպետարան	5	4
17	Արարատի մարզպետարան	6	6
18	Գեղարքունիքի մարզպետարան	6	6
19	Լոռու մարզպետարան	12	12
20	Կոտայքի մարզպետարան	7	7
21	Շիրակի մարզպետարան	15	15
22	Սյունիքի մարզպետարան	6	6
23	Վայոց ձորի մարզպետարան	3	3
24	Տավուշի մարզպետարան	3	3
25	Երևանի քաղաքապետարան	1	1
Ընդամենը		146	139

Մոնիտորինգի ենթարկված 139 Կազմակերպությունից՝

- 91 Կազմակերպություն (65,47%) աշխատել են շահույթով,
- 43 Կազմակերպություն (30,93%) աշխատել են վնասով,

- 5 Կազմակերպություն (3,6%) շահույթ (վնաս) չեն ձևավորել (Գծանկար 1.):

Գծանկար 1. Կազմակերպությունների ֆինանսական գործունեության արդյունքների տեսակարար կշիռը



2022թ-ի գործունեության արդյունքում վնասով աշխատած Կազմակերպությունների կողմից ձևավորած վնասը կազմել է 7,274,509.41 **հազ. դրամ**, ընդ որում 2021թ-ի արդյունքներով՝ վնասը կազմել է 7,295,623.7 **հազ. դրամ**: Այսինքն 2022 թվականին 2021 թվականի համեմատ վնասը նվազել է 21,114.3 **հազ. դրամով** (0.29%):

Համաձայն ներկայացված տեղեկատվության վնասը նախորդ տարվա համեմատ նվազել է հիմնականում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Կազմակերպություններում՝ 2,831,259.1 **հազ.դրամով**, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի Կազմակերպություններում՝ 14,504.7 **հազ. դրամով**, Պետական գույքի կառավարման կոմիտեի Կազմակերպություններում՝ 35,998.8 **հազ. դրամով**, Հանրային հեռարձակողի խորհրդի Կազմակերպություններում՝ 18,996.0 **հազ.դրամով**, ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի Կազմակերպություններում՝ 7,794.3 **հազ.դրամով**, ՀՀ Արագածոտնի, ՀՀ Լոռու, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանների ենթակայության Կազմակերպություններում՝ համապատասխանաբար՝ 1,085.0 **հազ.դրամով**, 389,186.1 **հազար դրամով**, 126,082.9 **հազ.դրամով**: Դրան հակառակ՝ վնասը նախորդ տարվա համեմատ ավելացել է հիմնականում ՀՀ առողջապահության նախարարության

Կազմակերպություններում՝ **166,436.3 հազ. դրամով**, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ենթակայության Կազմակերպություններում՝ **63,920.0 հազ. դրամով**, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Կազմակերպություններում՝ **737,664.4 հազ.դրամով**, ՀՀ ջրային կոմիտեի Կազմակերպություններում՝ **2,155,445.0 հազ. դրամով**, ՀՀ Արարատի մարզպետարանի, ՀՀ Արմավիրի, ՀՀ Շիրակի և ՀՀ Սյունիքի մարզպետարանների Կազմակերպություններում՝ համապատասխանաբար **94,888.5 հազ. դրամով**, **48,252.3 հազ.դրամով**, **43,253.6 հազ. դրամով** և **55,207.7 հազ.դրամով**:

Հաշվետու տարում վնաս ձևավորած կազմակերպությունների անվանացանկը և վնասի չափն ըստ մարմինների ներկայացված է **աղյուսակ 2-ում**:

աղյուսակ 2.

h/h	2022թ.-ի տարեկան գործունեության արդյունքում վնաս ձևավորած ընկերությունների անվանումը	Վնասի մեծությունը (հազ. դրամ)
ՀՀ առողջապահության նախարարություն		
1	«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ	4,376.0
2	«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ	129,614.0
3	«Այրվածքաբանության և Մաշկաբանության Ազգային Կենտրոն» » ՓԲԸ	4,485.6
4	«Բերդի ԲԿ» ՓԲԸ	6,525.7
5	«Ներոզների կլինիկա» ՓԲԸ	21,435.0
ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն		
6	«Գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ	88,3
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն		
7	«Պատնեշ» ՓԲԸ**	51,792.0
8	«Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ**	174,655.0
9	«Լազերային տեխնիկա» ՓԲԸ*	28,000.6
10	«Հայփոստ» ՓԲԸ**	694,819.0
11	«Գառնի-Լեռ» ՓԲԸ	18,184.0
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն		
12	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	18,880.0
13	«Հայատոմ» ՓԲԸ	10,146.0

14	«Նաիրիտ-2» ՓԲԸ**	2,329,905.9
15	«Էներգախիմպեքս» ՓԲԸ	8,863.0
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
16	«Հայ-Ալմաստ» ՓԲԸ	7 103,0
17	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ	56 817,0
ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե		
18	«Հրազդան մարզահամալիր» ՓԲԸ*	6 110.2
ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտե		
19	«Մելիորացիա» ՓԲԸ*	33,020.0
20	«Ջրառ» ՓԲԸ**	2,709,864.7
21	«Նոր Ակունք» ՓԲԸ*	2,271.0
22	«Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ**	1,744.0
23	«Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ**	630.3
24	«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	49,896.2
ՀՀ քաղաքաշինության կոմիտե		
25	«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ**	89,631.0
26	«Սալսա դիվելոպմենթ» ՓԲԸ**	8,795.7
ՀՀ հանրային հեռարձակողի խորհուրդ		
27	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ**	46.804.0
ՀՀ Արմավիրի մարզպետարան		
28	«Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ	48,252.3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան		
29	«Վարդենիսի հիվանդանոց» ՓԲԸ	26,231.2
ՀՀ Կոտայքի մարզպետարան		
30	«Աբովյանի ծննդատուն» ՓԲԸ	88.4

31	«Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ	12,304.0
ՀՀ Շիրակի մարզպետարան		
32	«Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ*	16,180.5
33	«Գյումրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ**	423,075.0
34	«Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ	16,629.4
ՀՀ Լոռու մարզպետարան		
35	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ*	34,950.0
36	«Հոգեոնյարդաբանական դիսպանսեր» ՓԲԸ	6,356.0
37	«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ	33,682.0
ՀՀ Սյունիքի մարզպետարան		
38	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	58,149.7
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան		
39	«Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ*	3,051.0
ՀՀ Արագածոտնի մարզպետարան		
40	«Ծաղկահովիտի առողջության կենտրոն» ՓԲԸ	205.1
ՀՀ Արարատի մարզպետարան		
41	«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ*	88,549.0
42	«Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	2,149.0
43	«Ակ.Ա.Հայրիյանի անվան Արմաշի ԱԿ» ՓԲԸ	4,190.0
Ընդամենը		7,274,509.41

* Կազմակերպություններ որոնք նախորդ հաշվետու տարում նույնպես աշխատել են վնասով:

** Կազմակերպություններ որոնք հաշվետու նախորդ երկու տարիներում անընդմեջ աշխատել են վնասով:

Համաձայն ներկայացված տեղեկատվության 2022թ. տարեկան տվյալներով շահույթով աշխատած Կազմակերպությունների զուտ շահույթը կազմել է **73,005,934.90 հազ. դրամ, ընդ որում 2021թ-ի արդյունքներով՝ Կազմակերպությունների կողմից ձևավորած զուտ շահույթը կազմել է 35,718,041.33 հազ. դրամ:** Այսինքն 2022 թվականին 2021 թվականի համեմատ զուտ շահույթը աճել է **37,287,881.57 հազ. դրամով (104%):** Զուտ շահույթը հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ աճել է

հիմնականում՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Կազմակերպությունում՝ **67,114.2 հազ. դրամով**, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կազմակերպություններում՝ 37,471,872.87 **հազ. դրամով**, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Կազմակերպություններում՝ 82,161.0 **հազ. դրամով**, ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի Կազմակերպություններում՝ **598,421.6 հազ. դրամով** և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի Կազմակերպություններում՝ **45,861.5 հազ.դրամով**: Դրան հակառակ շահույթով աշխատած մի շարք կազմակերպությունների զուտ շահույթը նախորդ տարվա համեմատ նվազել է հիմնականում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Կազմակերպություններում՝ 91,786.0 **հազ.դրամով**, ՀՀ պաշտպանության նախարարության Կազմակերպություններում՝ 54,632.0 **հազ.դրամով**, ՀՀ վարչապետի աշխատակազմի՝ 16, 614.8 **հազ. դրամով**, Պետական գույքի կառավարման կոմիտեի կազմակերպություններում՝ **57,681.5 հազ. դրամով**, ՀՀ հանրային հեռարձակողի խորհրդի՝ **208,020.0 հազ. դրամով**, ՀՀ ջրային կոմիտեի կազմակերպություններում՝ **63,873.0 հազ.դրամով**, ՀՀ Արմավիրի, ՀՀ Արարատի, ՀՀ Լոռու, ՀՀ Սյունիքի, ՀՀ Կոտայքի մարզպետարանների Կազմակերպություններում համապատասխանաբար՝ **71,386.1 հազ. դրամով**, **39,275.7 հազ.դրամով**, **35,030.6 հազ.դրամով**, **31,078.8 հազ.դրամով**, 110,076.9 **հազ. դրամով** կազմակերպություններում և Երևանի քաղաքապետարանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ում՝ **194,711.7 հազ.դրամով**:


2022թ. զուտ շահույթի ձևավորման մեջ գերակշիռ մաս է կազմում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ քաղաքացիական ավիացիայի, Երևանի քաղաքապետարանի՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ձևավորած զուտ շահույթը:

Հաշվետու տարում Կազմակերպությունների ընդամենը ակտիվները կազմել են 773,443,398.0 **հազ. դրամ**, այդ թվում ընթացիկ ակտիվները՝ 175,917,854.72**հազ. դրամ**:

Վերլուծության ենթարկված Կազմակերպություններն ունեն **252 444 590,60 հազ. դրամ** երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ, որից միայն **248 714 758,8 հազ. դրամը** ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ենթակայության Կազմակերպություններին է:

Հաշվետու ժամանակահատվածում վերլուծության ենթարկված կազմակերպություններում աշխատակիցների ընդհանուր թիվը կազմել է 25 956 **աշխատող**, **2021թ-ի 28 494 աշխատողի փոխարեն**:

Կազմակերպությունների ֆինանսական վերլուծության ամփոփ ցուցանիշները ներկայացված են՝ **Գծանկար 2-ում և աղյուսակ N 3-ում**:



Գծանկար 2. Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ ցուցանիշների վերաբերյալ

Վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ ՀՀ արդարադատության, ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ պաշտպանության նախարարությունների, ՀՀ վարչապետի աշխատակազմի և ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, ՀՀ Տավուշի մարզպետարանի ենթակայության բոլոր կազմակերպությունները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն՝ հաշվետու ժամանակաշրջանում աշխատել են շահույթով, իսկ Ջրային կոմիտեի և Քաղաքաշինության կոմիտեի ենթակայության բոլոր կազմակերպությունները՝ վնասով:

աղյուսակ 3.


Կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի ամփոփ ցուցանիշները.

N/N	Ցուցանիշներ	Չափ. միավոր	2022թ. տարեկան
1	Զուտ շահույթի ընդհանուր ծավալը	հազ. դրամ	73,005,934.90
2	Վնասի ընդհանուր ծավալը	հազ. դրամ	7,274,509.41

3	Ընդամենը ակտիվներ	հազ. դրամ	773,443,398.0
4	Ոչ ընթացիկ պարտավորություն, այդ թվում	հազ.դրամ	308,740,689.00
4.1	Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	հազ. դրամ	252,444,590.60
4.2	Ակտիվներին վերաբերվող շնորհներ	հազ. դրամ	37,757,769.40
5	Ընթացիկ պարտավորություն, այդ թվում	հազ. դրամ	100,687,649.90
5.1	գնումների գծով	հազ. դրամ	28,282,117.90
5.2	պետական բյուջեի գծով	հազ. դրամ	4,422,050.80
6	Ընթացիկ ակտիվներ	հազ. դրամ	175,917,854.72
7	Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	հազ. դրամ	215,929,300.00
8	Աշխատողների թվաքանակը	մարդ	25 956

Վերլուծության արդյունքում պարզվում է, որ հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ տեղի է ունեցել զուտ շահույթի աճման և վնասի նվազման դինամիկա (Գծանկար.3)

Գծանկար 3. Կազմակերպությունների 2021 և 2022թթ. ընթացքում ձևավորած զուտ շահույթ և վնաս՝ /մլն.դրամ/



Վերլուծության ենթարկված կազմակերպություններից 23-ի սեփական կապիտալը փոքր է կանոնադրական կապիտալից, ընդ որում 2 կազմակերպության սեփական կապիտալը բացասական է: Տեղեկատվությունն արտացոլվել է ստորև բերված աղյուսակում՝ **աղյուսակ 4**:


աղյուսակ 4

Կանոնադրական կապիտալից փոքր սեփական կապիտալ ունեցող կազմակերպությունների թիվը՝ ըստ պետական կառավարման լիազոր մարմինների

N	Նախարարություն, գերատեսչություն	Կանոնադրական կապիտալից փոքր սեփական կապիտալ ունեցող ընկերություններ		
		Թիվը	Որից՝	
			Դրական, բայց կանոնադրական կապիտալից փոքր սեփական կապիտալ ունեցողների թիվը	Բացասական մեծությամբ
1	2	3	4	5
1	ՀՀ Առողջապահության նախարարություն	2	1	1
2	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2	2	0
3	Քաղաքացիական ավիացիայի կոմիտե	1	1	0
4	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	3	3	0
5	ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե	5	4	1
6	ՀՀ Արմավիրի մարզպետարան	1	1	0
7	ՀՀ Լոռու մարզպետարան	3	3	0
8	ՀՀ Սյունիքի մարզպետարան	3	3	0
9	ՀՀ Շիրակի մարզպետարան	2	2	0
10	ՀՀ Տավուշի մարզպետարան	1	1	0
Ընդամենը		23	21	2

Պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն վերլուծության ենթարկված կազմակերպությունների կողմից զբաղեցրած շենք, շինությունների ընդհանուր մակերեսը կազմում է 1 735 658.97 **քմ**, այդ թվում վարձակալությամբ տրված տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 71 693.51 **քմ**, իսկ կազմակերպությունների կողմից չօգտագործվող տարածքների մակերեսը՝ 180 155.09 **քմ**: (**Գծանկար 3.**)

Գծանկար 3. Կազմակերպությունների կողմից օգտագործվող չօգտագործվող, վարձակալությամբ տրամադրված շենք, շինությունների վերաբերյալ



**Կազմակերպությունների գործունեության արդյունավետության որոշման արդյունքները
ըստ պետական կառավարման լիազոր մարմինների**

1. ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. 2022թ.-ի տարեկան տվյալներով նախարարության ենթակայությամբ առկա են 13 պետական մասնակցությամբ առևտրային Կազմակերպություն: «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի համար տեղեկատվություն չի ներկայացվել: Վերլուծությունն իրականացվել է 12 կազմակերպության համար՝ որից 7-ը աշխատել են շահույթով, 5-ը՝ վնասով:

2. Կազմակերպությունների աշխատողների ընդհանուր ցուցակային թիվը տարեկան տվյալներով կազմում է 2815 աշխատող:

3. Ստորև ներկայացված են Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ արդյունքները՝

(հազ. դրամ)

N	Ցուցանիշ	2022թ. տարեկան
1.	Սեփական կապիտալ	14,226,619.7
2.	Զուտ շահույթի ընդհանուր ծավալը	596,523.7
3.	Վնասի ընդհանուր ծավալը	166,436.3
4.	Եկամուտների ընդամենը ծավալը, այդ թվում՝	25,846,220.6
4.1	Հիմնական գործունեությունից	15,889,802.4
5.	Ծախսերի ընդհանուր ծավալը, այդ թվում՝	25,024,305.1
5.1	Ընդամենը հիմնական գործունեությանը վերաբերվող	23,879,230.4
6.	Ընթացիկ պարտավորություններ ընդամենը, այդ թվում՝	9,048,714.9
6.1	կրեդիտորական պարտքեր գնումների գծով	1,017,074.6
6.2	կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	368,211.6
6.3	աշխատավարձի և աշխատողների այլ կարճ.հատկացումների գծով	336,866.0

7.	Ընթացիկ ակտիվներ ընդամենը, այդ թվում	6,864,535.8
7.1	դեբիտորական պարտքեր վաճառքի գծով	441,422.2
7.2	դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,659,238.8
8.	Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	4,310,431.3
8.1	երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	213,005.0
8.2	ակտիվներին վերաբերվող շնորհներ	3,398,002.0
9.	Արտադրանքի, ապրանքի, աշխ., ծառայությունների իրացումից հասույթ	16,317,930.0

2022թ.-ի տարեկան տվյալներով 5 կազմակերպություն՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն», «Բերդի ԲԿ», «Նևրոզների կլինիկա», «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» և «Այրվածքաբանության և Մաշկաբանության Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ներն աշխատել են վնասով՝ ձևավորելով 166,436.3 հազ. դրամ վնաս, մնացած 7 կազմակերպություն աշխատել են շահույթով՝ ձևավորելով 596,523.7 հազ. դրամ զուտ շահույթ:

Վնաս ձևավորած ընկերությունների մոտ հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ նկատվել է ֆինանսական վիճակի վատթարացում: **«Բերդի ԲԿ», «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն», «Նևրոզների կլինիկա» և «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ները ձևավորել են համապատասխանաբար՝ 6,525.0 հազ. դրամ, 4,376.0 հազ. դրամ, 21,435.0 հազ. դրամ և 129,614.0 հազ. դրամ վնաս, նախորդ տարվա համապատասխանաբար՝ 813.7 հազ. դրամ, 172,814.0 հազ. դրամ 489.0 հազ. դրամ և 8,085.0 հազ. դրամ զուտ շահույթի համեմատ՝ զուտ վնասի ծավալի անկումը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 50 տոկոսից ավել:**

4. **«Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» և «Նևրոզների կլինիկա» ՓԲԸ-ների սեփական կապիտալի արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ընդ որում «Նևրոզների կլինիկա» ՓԲԸ-ի սեփական կապիտալը բացասական մեծություն է:**

5. «Բերդ ԲԿ» ՓԲԸ-ի եկամուտների 18,3 %, «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի եկամուտների 16,4%, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ի եկամուտների 19,2%, «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային

ինստիտուտ» ՓԲԸ-ի եկամուտների 21,1%, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի եկամուտների 47,6% ձևավորվել են այլ գործունեությունից (վարձակալություն, շնորհներից և անհատույց ակտիվներից, փոխարժեքային տարբերությունից, ակտիվների օտարումից, աջակցություն, եկամուտներին վերաբերվող շնորհներ, դրամաշնորհ, հասույթ դեղերի և ԲՆԱ-ի իրացումից):

6. Ըստ ներկայացված տեղեկատվության կազմակերպությունների կողմից զբաղեցրած շենք, շինությունների ընդհանուր մակերեսը կազմել է 182290.8 քմ, այդ թվում վարձակալությամբ տրված տարածքների ընդհանուր մակերեսը կազմել է 4052.3 քմ, իսկ Կազմակերպությունների կողմից չօգտագործվող տարածքների մակերեսը՝ 17950.2 քմ:

Հարկ է նշել, որ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից զբաղեցրած 8236.3 քմ տարածքից 1955.2 քմ, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի՝ 31456.5 քմ տարածքից 14604.3 քմ, և «Այրվածքաբանության և Մաշկաբանության Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ի զբաղեցրած 10559.7 քմ տարածքից 1390.7 ք.մ. տարածքները՝ չօգտագործվող տարածքներ են:

2. ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Նախարարության ենթակայությամբ 2022թ.-ի տարեկան տվյալներով առկա է 1 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն՝ «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ՝ աշխատել է շահույթով:

2. Կազմակերպության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 39 աշխատող:

3. Ստորև ներկայացված է առևտրային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ արդյունքները՝

(հազ. դրամ)

N	Ցուցանիշ	2022թ. տարեկան
1.	Սեփական կապիտալ	37,548.5
2.	Զուտ շահույթի ընդհանուր ծավալը	7,922.2
3.	Եկամուտների ընդամենը ծավալը՝ այդ թվում*	341,206.4
3.1	Հիմնական գործունեությունից	341,206.4

4.	Ծախսերի ընդհանուր ծավալը, այդ թվում՝	331,545.2
4.1	Ընդամենը հիմնական գործունեությանը վերաբերվող	331,545.2
5.	Ընթացիկ պարտավորություններ ընդամենը, այդ թվում	13,931.7
5.1	կրեդիտորական պարտքեր գնումների գծով	0
5.2	կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	6,058.6
5.3	աշխատավարձի և աշխատողների այլ կարճ.հատկացումների գծով	165.0
6.	Ընթացիկ ակտիվներ ընդամենը, այդ թվում	
6.1	դեբիտորակն պարտքեր վաճառքի գծով	65,078.2
6.2	դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,976.2
		22,497.8
7.	Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	17,701.7
7.1	երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	0
7.2	ակտիվներին վերաբերվող շնորհներ	17,701.7
8.	Արտադրանքի, ապրանքի, աշխ., ծառայությունների իրացումից հասույթ	341,206.4

2022թ.-ի տարեկան տվյալներով «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ն, ինչպես նախորդ տարի՝ աշխատել է շահույթով: Ընդ որում նախորդ տարվա համեմատ կազմակերպության մոտ նկատվել է ֆինանսական վիճակի բարելավում՝ 1.338.0 հազ.դրամով աճել է զուտ շահույթը, կուտակված շահույթի, ծավալները, ընթացիկ իրացվելիության գործակցի մասով արձանագրվել է դրական տեղաշարժ: Կազմակերպության եկամուտներն ամբողջովին ձևավորվել են հիմնական գործունեությունից:

4. Կազմակերպությունը զբաղեցնում է տարածք վարձակալական հիմունքներով:

3. ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1. ՀՀ վարչապետի աշխատակազմի ենթակայությամբ 2022թ.-ի տարեկան տվյալներով առկա են 3 Կազմակերպություն:

Համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի N 1347-Ա որոշման 1-ին կետի՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲ ընկերության՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող 100 տոկոս բաժնետոմսերով հավաստված իրավունքները հանձնվել են «Հայաստանի տեղեկատվական համակարգերի

գործակալություն» հիմնադրամի կողմից որպես հատուկ նշանակության գործիք ստեղծված «Տեղեկատվական համակարգերի հատուկ նշանակության գործիք» փակ բաժնետիրական ընկերության հավատարմագրային կառավարմանը, հետևաբար Որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի 1-ին ենթակետի՝ ընկերությունը ենթակա չէ մոնիթորինգի:

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել:

Վերլուծությունն իրականացվել է միայն «Արմենպրես պետական լրատվական գործակալություն» ՓԲԸ-ի համար, որը աշխատել է շահույթով:

2. Կազմակերպության աշխատողների միջին ցուցակային թիվը նշված ժամանակահատվածում կազմել է 94 աշխատող:

3. Ստորև ներկայացված է առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ արդյունքները՝

(հազ. դրամ)

N	Ցուցանիշ	2022թ. տարեկան
1.	Սեփական կապիտալ	70,143.8
2.	Զուտ շահույթի ընդհանուր ծավալը	3,986.1
3.	Եկամուտների ընդամենը ծավալը՝ այդ թվում*	310,420.6
3.1	Հիմնական գործունեությունից	204,587.3
4.	Ծախսերի ընդհանուր ծավալը, այդ թվում՝	305,559.5
4.1	Ընդամենը հիմնական գործունեությանը վերաբերվող	287,511.7
5.	Ընթացիկ պարտավորություններ ընդամենը, այդ թվում՝	56,483.2
5.1	կրեդիտորական պարտքեր գնումների գծով	40,573.8
5.2	կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	15,909.4
5.3	աշխատավարձի և աշխատողների այլ կարճ.հատկացումների գծով	0
6.	Ընթացիկ ակտիվներ ընդամենը, այդ թվում՝	108,005.4
6.1	դեբիտորակն պարտքեր վաճառքի գծով	53,890.7
6.2	դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	53,890.7

7.	Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	0
7.1	երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	0
7.2	ակտիվներին վերաբերվող շնորհներ	0
8.	Արտադրանքի, ապրանքի, աշխ., ծառայությունների իրացումից հասույթ	204,587.3

2022թ.-ի տվյալներով համակարգի վերլուծության ենթարկված **«Արմենպրես պեթրական լրատվական գործակալություն» ՓԲԸ-ն դարձյալ աշխատել է շահույթով, սակայն նախորդ տարվա համեմատ այն նվազել է 16,614.8 հազ.դրամով և կազմել է 3,986.1 հազ.դրամ:**

4. Ընկերության եկամուտների 65.9%-ը (204,587.3 հազ.դրամ) ձևավորվել են հիմնական գործունեությունից, իսկ 34,1%-ը (105,833.3 հազ.դրամ)՝ դրամաշնորհից:

5. Ըստ ներկայացված տեղեկատվության կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող շենք, շինություններ առկա չեն:

4. ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Նախարարության ենթակայությամբ 2022թ. տարեկան տվյալներով առկա է թվով 1 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն՝ «Զվարթնոց ԱՕԿ» ՓԲԸ, աշխատել է շահույթով:

2. Կազմակերպության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 50 աշխատող:

3. Ստորև ներկայացված է առևտրային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ արդյունքները՝

(հազ. դրամ)

N	Ցուցանիշ	2022թ. տարեկան
1.	Սեփական կապիտալ	255,176.9
2.	Շահույթի ընդհանուր ծավալը	131 763.4
3.	Եկամուտների ընդամենը ծավալը՝ այդ թվում	503,843,2
3.1	Հիմնական գործունեությունից	484,724.0

4.	Ծախսերի ընդհանուր ծավալը, այդ թվում՝	344,284.8
4.1	Ընդամենը հիմնական գործունեությանը վերաբերվող	326,656.4
5.	Ընթացիկ պարտավորություններ ընդամենը, այդ թվում՝	55,808.0
5.1	Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	2,274.6
5.2	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	36,624.9
5.3	աշխատավարձի և աշխատողների այլ կարճ.հատկացումների գծով	0.0
6.	Ընթացիկ ակտիվներ ընդամենը, այդ թվում՝	72,708.5
6.1	դեբիտորակն պարտքեր վաճառքի գծով	33,961.1
6.2	դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	32,276.5
7.	Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	22,715.4
7.1	երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	0
7.2	ակտիվներին վերաբերվող շնորհներ	22,715.4
8.	Արտադրանքի, ապրանքի, աշխ., ծառայությունների իրացումից հասույթ	484,724.0

2022 թվականի տարեկան տվյալներով «Ձվարթնոց ԱՕԿ» ՓԲԸ-ն՝ ինչպես նախորդ տարի, դարձյալ աշխարհել է շահույթով և նախորդ տարվա համեմատ շահույթի ծավալն աճել է 67,531.4 հազ.դրամով, իսկ կուրակված շահույթի ծավալը՝ 96,431.8 հազ. դրամով:

4. «Ձվարթնոց ԱՕԿ» ՓԲԸ-ի եկամուտները հիմնականում ձևավորվել են հիմնական գործունեությունից:

4. Ըստ ներկայացված տեղեկատվության կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող շենք, շինություններ առկա չեն:

5. ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Նախարարության ենթակայությամբ 2022թ. տարեկան տվյալներով առկա են 12 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն, որից 7-ը՝ աշխատել են շահույթով, 4-ը՝ վնասով:

2. Կազմակերպությունների աշխատողների միջին ցուցակային ընդհանուր թիվը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 2882:

3. Ստորև ներկայացված են առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ արդյունքները՝

(հազ. դրամ)

N	Ցուցանիշ	2022թ. տարեկան
1.	Սեփական կապիտալ	154,150,632.4
2.	Զուտ շահույթի ընդհանուր ծավալը	68,992,687.0
3.	Վնասի ընդհանուր ծավալը	2,367,794.9
4.	Եկամուտների ընդամենը ծավալը՝ այդ թվում	198,637,940.0
4.1	Հիմնական գործունեությունից	119,403,90.2
5.	Ծախսերի ընդհանուր ծավալը, այդ թվում՝	130,045,343.4
5.1	Ընդամենը հիմնական գործունեությանը վերաբերվող	107,383,033.4
6.	Ընդամենը ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	56,712,745.6
6.1	Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	22,602,271.7
6.2	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	1,488,775.5
6.3	աշխատավարձի և աշխատողների այլ կարճ.հատկացումների գծով	520,768.0
7.	Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	263,536,208.0
7.1	երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	248,714,758.8
7.2	ակտիվներին վերաբերվող շնորհներ	12,762,110.0
8.	Ընթացիկ ակտիվներ ընդամենը, այդ թվում՝	102,452,118.3
8.1	դեբիտորակն պարտքեր վաճառքի գծով	14,606,291.0
8.2	դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	28,919,246.7
9.	Արտադրանքի, ապրանքի, աշխ., ծառայությունների իրացումից հասույթ	119,350,847.0

2022թ. տարեկան տվյալներով 4 կազմակերպություն՝ «Հաշվարկային կենտրոն», «Հայատոմ», «Էներգահիմաեքս» և «Նաիրիտ-2» ՓԲԸ-ներն աշխատել են վնասով, «Ռադիոակտիվ թափոնների վնասագերծում» ՓԲԸ-ն՝ ինչպես նախորդ հաշվետու ժամանակշրջաններում շահույթ (վնաս) չի ձևավորել, մնացած 7 կազմակերպություն՝ «ՀԱԷԿ», «Երևանի ՋԵԿ», «ԲԷՑ», «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ», «Անյիտիկ» և

«Հայավտոկայան» ՓԲԸ-ներն աշխատել են շահույթով, ընդ որում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն և «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» հաշվետրու տարում ձևավորել են համապատասխանաբար՝ 10,196,236.0 հազ.դրամ և 8,201.0 հազ.դրամ շահույթ նախորդ տարվա՝ 4,085,317.0 հազ. դրամ և 35,984.0 հազ. դրամ վնասի փոխարեն, իսկ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ում շահույթը հաշվետրու տարում կազմել է 34,801,386.0 հազ.դրամ նախորդ տարվա 18,567,811.0 հազ.դրամի փոխարեն, «Բարձրավոլտ էլեկտրաջանցեր» ՓԲԸ-ում՝ 20,791,858.0 հազ. դրամ՝ նախորդ տարվա՝ 10,994,007.0 հազ. դրամի փոխարեն, «Անալիտիկ» ՓԲԸ-ում՝ 1,297,450.0 հազ. դրամ՝ նախորդ տարվա 6,255.0 հազ.դրամի փոխարեն:

Վնաս ձևավորած ընկերությունների մոտ հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ նկատվել է ֆինանսական վիճակի վատթարացում՝ «Հաշվարկային կենտրոն», «Հայափում» և «Էներգահիմպեքս» ՓԲԸ-ները ձևավորել են համապատասխանաբար՝ 18,880.0 հազ. դրամ, 10,146.0 հազ. դրամ և 10,808.0 հազ. դրամ վնաս, նախորդ տարվա համապատասխանաբար՝ 27,423.0 հազ. դրամ, 13,383.0 հազ. դրամ և 43,617.0 հազ. դրամ զուտ շահույթի համեմատ:

Ֆինանսական վիճակի վատթարացում է նկատվել նաև «Նաիրիտ-2» ՓԲԸ-ի մոտ՝ զուտ վնասի ծավալի աճը (հաշվետու տարում այն կազմել է 2,329,905.9 հազ. դրամ՝ նախորդ տարվա 1,077,753.2 հազ. դրամ վնասի համեմատ), ոչ ընթացիկ ակտիվների շահութաբերության ցուցանիշի անկումը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 50 տոկոսից ավել, տեղի է ունեցել կուտակված վնասի ծավալի 10 տոկոսից ավելի աճ:

Հաշվի առնելով «Ռադիոակտիվների թափոնների վնասագերծում» ՓԲԸ-ի գործունեության ոլորտը, որի արդյունքում կազմակերպությունը տարիներ շարունակ շահույթ (վնաս) չի ձևավորում, առաջարկվում է որպեսզի կազմակերպության կողմից մշակվի զարգացման այնպիսի գործարար ծրագիր, որը հետագայում կապահովի ֆինանսական ցուցանիշների դրական դինամիկա:

5. «Նաիրիտ 2» ՓԲԸ-ի եկամուտներն ամբողջությամբ ձևավորվել են ոչ հիմնական գործունեությունից՝ 90,698.2 հազ.դրամ գրավադրված անշարժ գույքի օտարումից: «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի եկամուտների 30 %, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի եկամուտների 36,0%, «ԲԷՏ» ՓԲԸ-ի եկամուտների 74,7% և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի եկամուտների 56,4% ձևավորվել են այլ գործունեությունից (փոխարժեքային տարբերությունից, ակտիվների օտարումից, ստացված շնորհներից, ֆինանսական եկամուտներից, վարձակալություն, արտարժույթի փոխարկումից, ավանդների հաշվեգրված տոկոսներ, գործառնական այլ եկամուտներ և այլն): Մնացած կազմակերպությունների եկամուտները հիմնականում ձևավորվել են հիմնական գործունեությունից:

6. Ըստ ՀՀ հանրային հեռարձակողի խորհրդի կողմից տրամադրված տեղեկատվության անկախ աուդիտի ենթարկված «Էներգահիմպեքս» ՓԲԸ-ի համար արձանագրվել է, որ ֆինանսական

հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը ու դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի համաձայն (ՖՀՄՍ-ներ):

4. Ըստ ներկայացված տեղեկատվության կազմակերպությունների կողմից զբաղեցրած շենք, շինությունների ընդհանուր մակերեսը կազմել է 300863.0 քմ, այդ թվում վարձակալությամբ տրված տարածքների ընդհանուր մակերեսը կազմել է 9020.1 քմ, իսկ կազմակերպությունների կողմից չօգտագործվող տարածքների մակերեսը կազմել է 16267.3 քմ:

Հարկ է նշել, որ «ԲԷՑ» ՓԲԸ-ի կողմից զբաղեցրած 39074.0 քմ տարածքից 4850.0 քմ, «Հայավտոկայան» ՓԲԸ-ի՝ 9891.7քմ տարածքից 6112.3 քմ, իսկ «Նաիրիտ-2» ՓԲԸ-ի զբաղեցրած ամբողջ 5335.0 քմ տարածքները չօգտագործվող տարածքներ են:

6. ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Նախարարության ենթակայությամբ 2022թ.-ի տարեկան տվյալներով առկա են 7 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն, որից 4-ը՝ աշխատել են շահույթով, 2-ը՝ վնասով, 1-ում շահույթ կամ վնաս չի ձևավորվել:

2. Կազմակերպությունների աշխատողների միջին ցուցակային ընդհանուր թիվը տարեկան տվյալներով կազմում է 367 աշխատող:

3. Ստորև ներկայացված է առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ արդյունքները՝

(հազ. դրամ)

N	Ցուցանիշ	2022թ. տարեկան
1.	Սեփական կապիտալ	3 394 045,0
2.	Զուտ շահույթի ընդհանուր ծավալը	103,946.5
3.	Վնասի ընդհանուր ծավալը	63,920.0
4.	Եկամուտների ընդամենը ծավալը, այդ թվում՝	3,957,579.0
4.1	Հիմնական գործունեությունից	3,559,508.8

5.	Ծախսերի ընդհանուր ծավալը, այդ թվում՝	3,899,085.3
5.1	Ընդամենը հիմնական գործունեությանը վերաբերվող	3,536,947.3
6.	Ընթացիկ պարտավորություններ ընդամենը, այդ թվում՝	2,740,950.7
6.1	կրեդիտորական պարտքեր գնումների գծով	36,440.2
6.2	կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	49,929.7
6.3	աշխատավարձի և աշխատողների այլ կարճ.հատկացումների գծով	35,216.0
7.	Ընթացիկ ակտիվներ ընդամենը, այդ թվում՝	3,692,610.1
7.1	դեբիտորակն պարտքեր վաճառքի գծով	112,472.0
7.2	դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	651,120.1
8.	Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	1,048,772.0
8.1	երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	9,727.0
8.2	ակտիվներին վերաբերվող շնորհներ	1,028,929.0
9.	Արտադրանքի, ապրանքի, աշխ., ծառայությունների իրացումից հասույթ	3,801,189.2

2022թ.-ի տարեկան տվյալներով նախարարության ենթակայության «Հայ-Ալմաստ» ՓԲԸ-ն և «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ն ձևավորել են վնաս, «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ-ն շահույթ (վնաս) չի ձևավորել, մնացած կազմակերպություններն աշխատել են շահույթով:

Վնաս ձևավորած ընկերությունների մոտ հաշվեպու տարում նախորդ տարվա համեմատ նկատվել է ֆինանսական վիճակի վարթարացում՝ «Հայ-Ալմաստ» ՓԲԸ ձևավորել է 7,103.0 հազ. դրամ վնաս՝ նախորդ տարի շահույթ (վնաս) չէր ձևավորել, իսկ «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ն ձևավորել է 56,817.0 հազ. դրամ վնաս՝ նախորդ տարվա 125,546.0 հազ. դրամ զուտ շահույթի համեմատ:

2022թ.-ի տարեկան տվյալներով Նախարարության ենթակայության կազմակերպությունների կողմից ձևավորած զուտ շահույթի ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է 91,786.9 հազ. դրամով, իսկ վնասն ավելացել՝ 63,920 հազ. դրամով, միաժամանակ 187,961.0 հազ. դրամով աճել է կուտակված շահույթի ծավալը:

4. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի եկամուտների 8%, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի եկամուտների 90,0% ձևավորվել են այլ գործունեությունից (վարձակալությունից, ակտիվների օտարումից, սուբրոգացիայի գծով եկամուտ, զուտ (վերաապահովագրողի մասնաբաժինը հանած, վերաապահովագրության միջնորդավճարի գծով եկամուտ, զուտ եկամուտ ֆինանսական գործունեությունից): «Մնացած կազմակերպությունների եկամուտները հիմնականում ձևավորվել են հիմնական գործունեությունից:

5. Ըստ ներկայացված տեղեկատվության կազմակերպությունների կողմից զբաղեցրած շենք, շինությունների ընդհանուր մակերեսը կազմել է 40719.0 քմ, այդ թվում վարձակալությամբ տրված տարածքների ընդհանուր մակերեսը կազմել է 668.4 քմ, չօգտագործվող տարածքներ առկա չեն:

7. ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Նախարարության ենթակայությամբ 2022թ.-ի տարեկան տվյալներով առկա են 4 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն, որից 3-ը աշխատել են շահույթով, 1-ը՝ վնասով:

2. Հաշվետու ժամանակաշրջանում ընկերությունների աշխատողների միջին ցուցակային ընդհանուր թիվը կազմել է 457 աշխատող:

3. Ստորև ներկայացված են առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ արդյունքները՝

(հազ. դրամ)

N	Ցուցանիշ	2022թ. տարեկան
1.	Սեփական կապիտալ	134,030.5
2.	Զուտ շահույթի ընդհանուր ծավալը	12,831.0
3.	Վնասի ընդհանուր ծավալը	88.3
4.	Եկամուտների ընդամենը ծավալը՝ այդ թվում*	809,188.3
4.1	Հիմնական գործունեությունից	761,813.7
5.	Ծախսերի ընդհանուր ծավալը, այդ թվում՝	795,214.7
5.1	Ընդամենը հիմնական գործունեությանը վերաբերվող	781,645.5
6.	Ընթացիկ պարտավորություններ ընդամենը, այդ թվում՝	63,998.2
6.1	Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	2,847.6
		7,464.0

6.2	կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	273.9
6.3	աշխատավարձի և աշխատողների այլ կարճ.հատկացումների գծով	
7.	Ընթացիկ ակտիվներ ընդամենը, այդ թվում՝	156,632.2
7.1	դեբիտորական պարտքեր վաճառքի գծով	32,586.9
7.2	դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	111,072.0
8.	Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	51,855.5
8.1	երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	0
8.2	ակտիվներին վերաբերվող շնորհներ	51,855.5
9.	Արտադրանքի, ապրանքի, աշխ., ծառայությունների իրացումից հասույթ	464,497.0

2022թ.-ի տարեկան տվյալներով Նախարարության ենթակայության 3 կազմակերպությունները՝ «Դավիթ Համբարձումյանի անվան ջրացատկի օլիմպիական հերթափոխի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի հենակետային բժշկական քոլեջ» և «Կրթություն» թերթի խմբագրություն ՓԲԸ-ները՝ ինչպես նախորդ տարի, դարձյալ աշխատել են շահույթով, Կազմակերպությունների մոտ նախորդ տարվա նկատմամբ ֆինանսատնտեսական վիճակի առանձնակի փոփոխություն չի նկատվել:

«Գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն աշխատել է վնասով, նախորդ տարվա համեմատ նկատվել է ֆինանսական վիճակի վարթարացում՝ Կազմակերպությունը ձևավորել է 88.3 հազ. դրամ վնաս նախորդ տարվա 3,053.2 հազ. դրամ շահույթի համեմատ, նվազել է կուտակված շահույթը, արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ չի ձևավորել:

2022թ.-ի տարեկան տվյալներով Նախարարության ենթակայության կազմակերպությունների կողմից ձևավորած զուտ շահույթի ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է 3,056.3 հազ. դրամով, իսկ վնասն ավելացել՝ 88.3 հազ. դրամով, միաժամանակ 15,513.3 հազ. դրամով նվազել է կուտակված շահույթի ծավալը:

4. «Դավիթ Համբարձումյանի անվան ջրացատկի օլիմպիական հերթափոխի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՓԲԸ-ի եկամուտներն ամբողջությամբ, իսկ «Գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ եկամուտների 8% ձևավորվել են ոչ հիմնական գործունեությունից՝

վարձակալություն: Մնացած կազմակերպությունների եկամուտներն ամբողջովին ձևավորվել են հիմնական գործունեությունից:

5. Ըստ ներկայացված տեղեկատվության՝ կազմակերպությունների կողմից զբաղեցրած շենք, շինությունների ընդհանուր մակերեսը կազմել է 13576.2 քմ, այդ թվում վարձակալությամբ տրված տարածքների ընդհանուր մակերեսը կազմել է 2789.1 քմ, իսկ կազմակերպությունների կողմից չօգտագործվող տարածքներ առկա չեն: «Գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 8388.7 քմ զբաղեցրած տարածքից՝ 1193.1քմ տարածքը տրված է վարձակալության, իսկ «Դավիթ Համբարձումյանի անվան ջրացատկի օլիմպիական հերթափոխի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՓԲԸ-ի 1596.7քմ տարածքն ամբողջությամբ է տրված վարձակալության:

8. ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Նախարարության ենթակայությամբ 2022թ.-ի տարեկան տվյալներով առկա են 2 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն՝ 2-ն էլ աշխատել են շահույթով:

2. Կազմակերպություններում աշխատողների միջին ցուցակային ընդհանուր թիվը հաշվետու ժամանակաշրջանում կազմում է 237 աշխատող:

3. Ստորև ներկայացված են առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ արդյունքները՝

(հազ. դրամ)

N	Ցուցանիշ	2022թ. տարեկան
1.	Սեփական կապիտալ	751 837,0
2.	Զուտ շահույթի ընդհանուր ծավալը	14 262,0
3.	Եկամուտների ընդամենը ծավալը՝ այդ թվում*	503 184,3
3.1	Հիմնական գործունեությունից	496 600,9
4.	Ծախսերի ընդհանուր ծավալը, այդ թվում՝	484 543,8
4.1	Ընդամենը հիմնական գործունեությանը վերաբերվող	472 975,6

5.	Ընթացիկ պարտավորություններ ընդամենը, այդ թվում՝	71 491,0
5.1	կրեդիտորական պարտքեր գնումների գծով	10 208,0
5.2	կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	20 462,0
5.3	աշխատավարձի և աշխատողների այլ կարճ. հատկացումների գծով	2 481,0
6.	Ընթացիկ ակտիվներ ընդամենը, այդ թվում՝	
6.1	դեբիտորակն պարտքեր վաճառքի գծով	204 912,0
6.2	դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5 641,1
		152 980,9
7	Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	0
7.1	երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	0
7.2	ակտիվներին վերաբերվող շնորհներ	0
8.	Արտադրանքի, ապրանքի, աշխ., ծառայությունների իրացումից հասույթ	488 116,0

2022թ.-ի տարեկան տվյալներով Նախարարության ենթակայության՝ «Զինառ» և «Արմ-Աէրո» ՓԲԸ-ներն՝ ինչպես նախորդ տարի, դարձյալ աշխատել են շահույթով և միասին ձևավորել են 14,262.0 հազ. դրամ զուտ շահույթ:

«Արմ-Աէրո» ՓԲԸ-ի մոտ նախորդ տարվա համեմատ նկատվել է ֆինանսական վիճակի վարթարացում՝ չնայած կազմակերպությունն աշխատել է շահույթով, սակայն զուտ շահույթը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 51,139.0 հազ. դրամով, այսինքն զուտ շահույթի, իրացումից հասույթի, ընթացիկ իրացվելիության ցուցանիշի անկումը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 50 և ավելի տոկոս: «Զինառ» ՓԲԸ-ի մոտ ֆինանսական վիճակի առանձնակի փոփոխություն չի նկատվել:

2022թ.-ի տարեկան տվյալներով Նախարարության ենթակայության կազմակերպությունների կողմից ձևավորած զուտ շահույթի ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է 54,632.0 հազ. դրամով:

4. Կազմակերպությունների եկամուտներն հիմնականում ձևավորվել են հիմնական գործունեությունից:

5. Ըստ ներկայացված տեղեկատվության՝ կազմակերպությունների կողմից զբաղեցրած շենք, շինությունների ընդհանուր մակերեսը կազմել է 4500.0 քմ, այդ թվում վարձակալությամբ տրված տարածքների ընդհանուր մակերեսը կազմել է 3800.0 քմ, իսկ կազմակերպությունների կողմից չօգտագործվող տարածքները՝ 700.0 քմ: «Արմ-Աէրո» ՓԲԸ-ն իր գործունեությունն իրականացնում է

վարձակալած տարածքում: «Ջինառ» ՓԲԸ-ի կողմից զբաղեցրած շենք, շինությունների ընդհանուր մակերեսը կազմել է 4500.0 քմ, այդ թվում վարձակալությամբ տրված տարածքների ընդհանուր մակերեսը կազմել է 3800.0 քմ, իսկ կազմակերպության կողմից չօգտագործվող տարածքների մակերեսը կազմել է 700.0 քմ:

9. ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Նախարարության ենթակայությամբ 2022թ.-ի տարեկան տվյալներով առկա են 10 կազմակերպություն: «Արմկոսմոս» ՓԲԸ-ն ստեղծված է ՀՀ կառավարության գաղտնի որոշմամբ և ընկերության գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է, վերլուծությունն իրականացվել է 9 կազմակերպության համար, որից 4-ը աշխատել են շահույթով, 5-ը՝ վնասով:

2. Կազմակերպությունների աշխատողների ընդհանուր թիվը կազմել է 3931 աշխատող:

3. Ստորև ներկայացված է առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ արդյունքները՝

(հազ. դրամ)

N	Ցուցանիշ	2022թ. տարեկան
1.	Սեփական կապիտալ	30,647,124.3
2.	Զուտ շահույթի ընդհանուր ծավալը	339,452.0
3.	Վնասի ընդհանուր ծավալը	967,450.6
4.	Եկամուտների ընդամենը ծավալը՝ այդ թվում*	16,576,700.5
4.1	Հիմնական գործունեությունից	13,255,341.0
5.	Ծախսերի ընդհանուր ծավալը, այդ թվում՝	16,721, 639.1
5.1	Ընդամենը հիմնական գործունեությանը վերաբերվող	11,829, 399.1
6.	Ընթացիկ պարտավորություններ ընդամենը, այդ թվում՝	6, 598,455.8
6.1	կրեդիտորական պարտքեր գնումների գծով	1,844,259.8
6.2	կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	359,559.2
6.3	աշխատավարձի և աշխատողների այլ կարճ.հատկացումների գծով	97,680.5

7.	Ընթացիկ ակտիվներ ընդամենը, այդ թվում	12,382,886.6
7.1	դեբիտորական պարտքեր վաճառքի գծով	3,364,140.7
7.2	դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,514,888.9
8.	Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	7,200,858.0
8.1	երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	422,900.0
8.2	ակտիվներին վերաբերվող շնորհներ	1,971,262.0
9.	Արտադրանքի, ապրանքի, աշխ., ծառայությունների իրացումից հասույթ	13,255,341.0

2022թ. տարեկան տվյալներով Նախարարության ենթակայության կազմակերպություններից՝ «Պատնեշ», «Լազերային տեխնիկա», «Գառնի-Լեռ», «Հայփոստ» ՓԲԸ-ները և «Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ-ն աշխատել են վնասով և ձևավորել են համապատասխանաբար՝ 51,792.0 հազ. դրամ, 28,000.6 հազ. դրամ, 18,184.0 հազ. դրամ, 694,819.0 հազ. դրամ և 174,655.0 հազ. դրամ վնաս: «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց», «Հատուկ կապ», «Գեոկոսմոս» և «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ-ներն աշխատել են շահույթով և ձևավորել են համապատասխանաբար՝ 183,958.0 հազ. դրամ, 19,883.0 հազ. դրամ, 42,689.0 հազ. դրամ և 92,922.0 հազ. դրամ շահույթ:

Կազմակերպությունների կողմից ձևավորած զուտ շահույթը, ինչպես նաև զուտ վնասը նախորդ տարվա համեմատ աճել են համապատասխանաբար՝ 82,161.0 հազ. դրամով, 737,664.4 հազ. դրամով:

«Պատնեշ» ՓԲԸ-ն և «Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ-ն երեք տարի անընդմեջ աշխատել են վնասով, ընդ որում վնաս ձևավորած բոլոր Կազմակերպություններում հաշվետու տարվա վնասը նախորդ տարվա համեմատ աճել է:

